ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԲՈՒԼԻՆԳԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն
Լիբերալ քաղաքականության ինստիտուտ

2024թ. մայիս

Մեխանիզմը մշակվել է Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան աջակցությամբ իրականացվող «Հանուն բուլինգից ազատ դպրոցի» ծրագրի և ՀՀ ԿԳՄՄՆ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և Լիբերալ քաղաքականության ինստիտուտի միջև կնքված հուշագրի շրջանակում: Այն հիմնված է դպրոցներում երեխաների իրավունքների պաշտպանության տեղական և միջազգային փորձի վրա:

Բովանդակությունն արտահայտում է հեղինակների տեսակետները, որոնք կարող են չհամընկնել Նիդերլանդների Թագավորության դեսպանատան և այլոց մոտեցումներին:

Մեխանիզմը ՀՀ ԿԳՄՍ նախարարի 27 հունիսի 2024թ. թիվ 1155-Ա/2 հրամանով երաշխավորվել է գործածության՝ որպես ուսումնական նյութ:

Աշխատանքային խմբի ղեկավար՝
Լ. Ա. Մնացականյան

Հեղինակներ՝
Հայկուհի Արտաշեսի Ադամյան
Անի Սամվելի Խուդոյան

Խմբագիր՝ Սարգսյան Հայկանուշ Անատոլի

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024
© Լիբերալ քաղաքականության ինստիտուտ ՀԿ, 2024

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

Բուլինգը դպրոցում 6

ՄԱՍ 1. ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ ԵՎ ԱՌԿԱ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ 11

1.2 Իրավական շրջանակ 11

1.2 Դպրոցներում բուլինգի կանխարգելմանն ու արձագանքմանն ուղղված առկա քաղաքականություն և ընթացակարգեր 11

ՄԱՍ 2. ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԲՈՒԼԻՆԳԻ ԿԱՆԽԱՐԳԵՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ (ՀԱԿԱԲՈՒԼԻՆԳԱՅԻՆ) ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ 13

2.1 Դպրոցի հակաբուլինգային քաղաքականություն և ընթացակարգեր (դպրոցի մակարդակ)13

2.1.1 Հակաբուլինգային քաղաքականություն 13

2.1.2 Բուլինգի կանխարգելման և արձագանքման ընթացակարգեր..... 15

2.1.3 Դպրոցական դրական մշակույթի և մթնոլորտի ձևավորում 15

2.1.4 Արդյունավետ ղեկավարում..... 17

2.1.5 Իրազեկման միջոցառումների իրականացում..... 17

2.1.6 Միասնական ըմբռնում, թե ինչ է բուլինգը, և դրա ազդեցությունը..... 18

2.1.7 Արդյունավետ վերահսկողություն և մշտադիտարկում 18

2.1.8 Աջակցությունը անձնակազմին 19

2.1.9 Բուլինգի վարքագծի հետևողական գրանցումը, բուլինգի հայտաբերումը և ուղղորդումը 19

2.1.10 Հակաբուլինգային քաղաքականության արդյունավետության շարունակական գնահատումը..... 21

2.1.11 Հակաբուլինգային քաղաքականության իրականացման հաշվետվողականությունը .. 21

2.2 Մանկավարժական անձնակազմի վերապատրաստումներ (անձնակազմի մակարդակ).... 22

2.3 Սոցիալ-հուզական ուսումնառության ծրագիր (սովորողի մակարդակ)..... 22

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 28

Հավելված 1. Դպրոցներում բուլինգի կանխարգելման գործնական օրինակներ.....29

Հավելված 2. Դրական դպրոցական մշակույթի և մթնոլորտի ձևավորմանն ուղղված գործնական խորհուրդներ 30

Հավելված 3. Բուլինգի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի ստուգման հարցարան . 31
Հավելված 4. Բուլինգի միջադեպը գրանցելու ձևանմուշ.....32
Հավելված 6. Բուլինգի դեպքերին արձագանքելու ալգորիթմ 34
Հավելված 7. Բուլինգի վարքագծի գնահատման չափանիշներ (կարիքներ և ռիսկեր) 35
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....36

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի դերն է ապահովել համապատասխան կրթություն բոլոր սովորողների համար: Այս նպատակին հասնելու համար էական պայման է անվտանգ, ապահով ուսումնական միջավայրը: Բուլինգն իր բնույթով խաթարում և նվազեցնում է կրթության որակը (Glew et al., 2005; Juvonen, Wang & Espinoza, 2011; Strøm et al., 2013): Հետազոտությունները ցույց են տալիս, որ բուլինգը կարող է կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցություն ունենալ սովորողների ֆիզիկական, հոգեբանական և մտավոր բարեկեցության, դպրոցում ներգրավվածության, ինքնավստահության (Hawker & Boulton, 2000) և հավակնություններն ու հետաքրքրությունները հետապնդելու ունակության վրա (Vlachou et al., 2011): Բացի այդ, հետազոտությունը ցույց է տվել, որ բուլինգի ենթարկվելու հնարավոր բացասական հետևանքները հաճախ շարունակվում են նաև հասուն տարիքում (Brunstein et al., 2019; Copeland et al., 2013; Kontak et al., 2019): Բուլինգը դիտվում է որպես համաշխարհային խնդիր դպրոցներում (UNESCO, 2017):

Թյուր է կարծիք կա, որ բուլինգը երեխայի զարգացման նորմալ փուլ է, և որ այն սովորեցնում է երեխաներին դառնալ ավելի տոկուն: Յուրաքանչյուր սովորող իրավունք ունի ապահով զգալ տանը, դպրոցում և համայնքում (ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոնվենցիա, 1990): Վնասակար վարքագիծը դադարեցնելու համար մեծահասակները պետք է աջակցեն երեխաներին, ովքեր փնտրում են նրանց օգնությունը: Նրանք պետք է անհապաղ արձագանքեն և կանխարգելիչ քայլեր ձեռնարկեն՝ ապագայում նման վարքագիծը բացառելու համար:

Դպրոցական բուլինգը կարող է դրականորեն և վճռականորեն հաղթահարվել դպրոցում իրականացվող մի շարք միջոցառումների և ռազմավարությունների միջոցով, որոնց դեպքում դպրոցական համայնքի բոլոր անդամներին հնարավորություն է տրվում արդյունավետորեն գործել այս վարքագծի դեմ: Թեև ընդունված է, որ ընտանեկան և սոցիալական գործոնները էական դեր են խաղում բուլինգի պատճառների և կանխարգելման գործում, դպրոցի դերը կանխարգելիչ աշխատանքներում նույնպես կարևոր է, և պետք չէ այն թերագնահատել: Դպրոցական նախաձեռնությունները կարող են կամ ամրապնդել դրական ջանքերը, կամ օգնել հակազդել անընդունելի վարքագիծը փոխելու ծնողների անհաջող փորձերին: Ծնողները և սովորողները հատկապես կարևոր դեր և պատասխանատվություն ունեն՝ օգնելու դպրոցին՝ կանխելու և շտկելու դպրոցական բուլինգի դրսևորումները և վարքագիծը, ինչպես նաև հաղթահարելու ցանկացած բացասական ազդեցություն, որը տեղի է ունենում դպրոցում*:

Միջազգային հետազոտությունները հստակորեն ցույց են տալիս բուլինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում դպրոցական քաղաքականության առկայության և իրականացման կարևորությունը: Հակաբուլինգային քաղաքականությունը կարող է անկյունաքար հանդիսանալ դպրոցներում բուլինգի դրսևորումների դեմ պայքարում:

* Այս փաստաթղթում ցանկացած հղում ծնողներին կարելի է վերաբերել նաև խնամակալներին:

Բուլինգը դպրոցում

Բուլինգի սահմանումը

«Երեխայի բուլինգ՝ երեխայի վարքագծի դրսևորումը, անձնական կախվածությունը, անօգնականությունը, վիճակի խոցելիությունը կամ իշխանության կամ ուժի անհավասարակշռությունն օգտագործելով, մեկ կամ մի քանի անձանց կողմից պարբերաբար դիտավորյալ բացասական (տհաճ կամ վիրավորական) վարքագիծ, որն իրականացվում է բանավոր կամ գրավոր արտահայտության, ֆիզիկական կամ հոգեբանական բռնության գործադրմամբ, ներառյալ՝ կիբերբուլինգը, որն իրականացվում է առցանց միջավայրում՝ էլեկտրոնային սարքավորումների, այդ թվում՝ համակարգիչների, բջջային հեռախոսների և այլ էլեկտրոնային սարքերի օգտագործմամբ»:

Բացի այդ, այս ընթացակարգերի համատեքստում մեկանգամյա վիրավորական կամ ցավ պատճառող հրապարակային հաղորդագրություն, պատկեր կամ հայտարարություն տեղադրելը սոցիալական ցանցում կամ այլ հանրային ֆորումում, որտեղ այդ հաղորդագրությունը, պատկերը կամ հայտարարությունը կարող են դիտվել և/կամ կրկնվել/կիսվել այլ մարդկանց կողմից, կարող է դիտարկվել որպես բուլինգի վարքագիծ:

Բուլինգի տեսակները

Ստորև ներկայացված են սովորողների շրջանում տարածված բուլինգի մի քանի տեսակներ.

- ***Ֆիզիկական բուլինգ՝*** ինչ-որ մեկին ֆիզիկապես վնաս հասցնել կամ վախեցնել: Դրանք այն գործողություններն են, որոնք ֆիզիկական ներգործություն, վնաս, ցավ կամ վնասվածք են պատճառում երեխային: Այդ գործողությունները ներառում, բայց չեն սահմանափակվում այնպիսի արարքներով, ինչպիսիք են հրելը, հարվածելը, ապտակելը, ծեծելը, խեղդելը, առողջությանը տարբեր աստիճանի վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը:
- ***Վերբալ (բանավոր) բուլինգ՝*** ինչ-որ մեկին նվաստացնելու նպատակով վիրավորական անուններ կպցնելը կամ ծաղրելը: Վերբալ բուլինգի գործողությունները ներառում են երեխային անընդհատ քննադատելը, նրա վրա բղավելը, ծաղրը, բամբասանքը, վիրավորանքը, նսեմացումը (օրինակ, վատ, անպատշաճ խոսքեր ասելը, անհարմար/ամոթալի/ծիծաղելի վիճակի մեջ դնելը և այլն):
- ***Սոցիալական բուլինգ***, որ երբեմն անվանում են թաքնված բուլինգ, հաճախ ավելի դժվար է ճանաչել և կարող է իրականացվել անձի թիկունքում: Սոցիալական բուլինգը անձի հարաբերություններին կամ կամ հեղինակությունը վնաս պատճառելն է՝ կեղծ լուրեր կամ բամբասանքներ տարածելու, խմբերից կամ իրադարձություններից դուրս թողնելու, նվաստացուցիչ մականուններ օգտագործելու կամ խմբի ներկայությամբ հանդիմանելու միջոցով: Այն տեղի է ունենում, երբ որոշակի սովորող դիտավորյալ մեկուսացված է,

բացառվում կամ անտեսվում է խմբի որոշ անդամների կամ ամբողջ խմբի կողմից:

- ***Կիբերբուլինգ,*** որի դեպքում օգտագործվում են առցանց և բջջային տեխնոլոգիաներ՝ ինչ-որ մեկին էմոցիոնալ և սոցիալական վնաս պատճառելու համար: Կիբերբուլինգը բուլինգի պես ծաղր, վիրավորանք, սպառնալիք է պարունակում, բայց կատարվում է համացանցի, բջջային հեռախոսի միջոցով: Օրինակ՝ սոցիալական ցանցում ատելության խոսքի, բամբասանքի, լուսանկարի տարածումը (UNESCO, 2020):
- ***Տնտեսական բուլինգ կամ շորթում՝*** գումարի պահանջներ ներկայացնելը, որոնք հաճախ ուղեկցվում են սպառնալիքներով (երբ թիրախավորված սովորողը չի կատարում պահանջը): Սովորողին կարող են նաև ստիպել իրենց համար իրեր գողանալ:

Բուլինգի հետևանքները

Նրանք, ովքեր ենթարկվում են բուլինգի, կարող են ունենալ անապահովության, նվաստացվածության և ծայրահեղ անհանգստության զգացումներ՝ այդպիսով դառնալով ավելի խոցելի: Ինքնավստահությունը կարող է վնասվել ինքնագնահատականի նվազման հետևանքով: Թեև նրանք կարող են չխոսել այն մասին, թե ինչ է կատարվում իրենց հետ, նրանց տառապանքը ակնհայտ է տրամադրության և վարքի փոփոխության միջոցով: Բուլինգի ծայրահեղ դեպքերը կարող են հանգեցնել սուիցիդալ վարքի: Հետևաբար, կարևոր է զգոն լինել վարքի փոփոխությունների նկատմամբ, քանի որ վաղ միջամտությունը կարող է արդյունավետ լինել: **Նրանք, ովքեր ականատես են լինում բուլինգին,** նույնպես կարող են տուժել նմանօրինակ իրավիճակներում, ինչպես նրանք, ովքեր ենթարկվում են բուլինգի: Օրինակ՝ այն սովորողները, ովքեր ականատես են լինում բուլինգի, հատկապես ապրումակցման բարձր մակարդակ ունենալու դեպքում, կարող են նույնականացնել իրենց այն անձի հետ, ով ենթարկվում է բուլինգի, և անհանգստություն զգալ, գիտակցել, որ իրենք էլ կարող են հայտնվել նման իրավիճակում: Սովորողները կարող են նաև մեղքի կամ անհանգստության զգացում ունենալ, որ չեն կարողանում օգնել բուլինգի ենթարկվողին:

Նրանք, ովքեր ենթարկում են բուլինգի, նույնպես տուժում են: Այս սովորողները ավելի շատ են ենթարկվում մի շարք խնդիրներ ունենալու ռիսկի, այդ թվում՝ ալկոհոլի և այլ թմրամիջոցների չարաշահման[1]: Նմանատիպ վարքագծի երկարաժամկետ կրկնությունը կարող է պատճառ դառնալ հակասոցիալական անհատականության զարգացման, տագնապային խանգարումների, իրավախախտ անձի ձևավորման, ինչպես նաև կրթական և մասնագիտական նվաճումների նվազման[2]:

Ավելի խոցելի սովորողներ: Թեև բուլինգի կարող է ենթարկվել ցանկացած անձ, հայտնի է, որ ոմանք կարող են ավելի խոցելի լինել: Նման խոցելի խմբերը ներառում են հաշմանդամություն ունեցող կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, էթնիկ

[1] Saldiraner, M., and Gizir, S. (2021). Bullying from the perspectives of middle school principals. Int. J. Progr. Educ. 17, 294–313. doi: 10.29329/ijpe.2020.329.19
[2] Farrington, D. P., & Ttofi, M. M. (2009). How to reduce school bullying. Victims and Offenders, 4, 321–326.

փոքրամասնությունների և փախստականների խմբերի, այլ մշակույթի, դավանանքի սովորողների:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ հաշմանդամություն ունեցող և/կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ բռնության ենթարկվելու հավանականությունն ավելի մեծ է, քան մյուսներինը: Բուլինգը կարող է նաև ավելի ծանր ազդեցություն ունենալ նման սովորողների վրա[3]: Այն սովորողները, ովքեր չեն հասկանում սոցիալական նշանները և/կամ դժվարանում են հաղորդակցվել, կարող են ավելի խոցելի լինել բուլինգի նկատմամբ[4]: Մտավոր (ինտելեկտուալ) խնդիրներ ունեցող սովորողները կարող են չհասկանալ սոցիալական իրավիճակները և, հետևաբար, վստահել բոլորին:

Բուլինգի ցուցիչները

Հետևյալ նշաններն ու ախտանիշները կարող են հուշել, որ սովորողը ենթարկվում է բուլինգի.

- ✓ դպրոց գնալու և վերադառնալու հետ կապված անհանգստություն, օրինակ՝ խնդրել ծնողներին իրեն ուղեկցել դպրոց կամ վերցնել դպրոցից, փոխել ճանապարհը կամ ուղղությունը, խուսափել դպրոց գնալու և վերադառնալու կանոնավոր ժամերից,
- ✓ դպրոց հաճախել չցանկանալը, հրաժարվելը, բացակայությունները,
- ✓ կրթական արդյունքների վատթարացում, կենտրոնացման բացակայություն, դպրոցի նկատմամբ ոգևորության և հետաքրքրության կորուստ,
- ✓ առողջական խնդիրներ, օրինակ՝ գլխացավեր, ստամոքսի ցավեր, ախորժակի բացակայություն, սննդային ռեժիմում կտրուկ փոփոխություններ, էնուրեզ, էնկոպրեզ և այլն,
- ✓ տրամադրության կամ վարքի անբացատրելի փոփոխություններ, օրինակ՝ պարփակվածություն, ներամփոփություն, խոսելու, շփման ցանկության բացակայություն, ընդհանուր լարվածություն, դյուրագրգռություն, ընկճվածություն և այլն, որոնք կարող են հատկապես նկատելի լինել հանգստյան օրերից հետո դպրոց վերադառնալուց առաջ կամ առավելապես ավելի երկար դպրոցական արձակուրդներից հետո,
- ✓ անհանգստություն կամ դրա տեսանելի նշաններ, օրինակ, կակազություն, մղձավանջային երազներ, քնի խանգարումներ, լաց, փսխում և այլն,
- ✓ անհայտ կորած կամ վնասված իրեր,
- ✓ գումարային պահանջների ավելացում կամ գողություն,
- ✓ անբացատրելի կապտուկներ կամ կտրվածքներ, վնասված հագուստ,
- ✓ դժկամություն և/կամ իր անհանգստության պատճառների մասին խոսելուց հրաժարում,
- ✓ ուշադրության բացակայություն, ցրվածություն, սեփական իրերը հաճախ կորցնելու

[3] Russell, S. T., K. O. Sinclair, V. P. Poteat, and B. W. Koenig. 2012. "Adolescent Health and Harassment Based on Discriminatory Bias." American Journal of Public Health 102: 493–495.
[4] UNESCO. 2017. School Violence and Bullying. Global Status Report. Paris: UNESCO.

միտում[5]:

Կախված անձի հոգեբանական առանձնահատկություններից և արտաքին գործոններից՝ կարող են լինել նաև այլ նշաններ: Դրանց առկայությունը պարտադիր չէ վերագրել միայն բուլինգի, բայց եթե կրկնվում են կամ ի հայտ են գալիս համակցված, այդ նշանները պահանջում են ուսումնասիրություն՝ պարզելու, թե ինչն է ազդում սովորողի վրա:

Հետևյալ նշաններն ու ախտանիշները կարող են հուշել, որ սովորողը հակված է բուլինգի վարքագծի դրսևորման.

- ✓ Հաճախ է հայտնվում կոնֆլիկտային իրավիճակներում, մասնակից դառնում տարբեր վեճերի, ծեծկռտուքների:
- ✓ Ընկերական միջավայրում կան հակասոցիալական վարքագիծ դրսևորող անձինք:
- ✓ Անհայտ ուղիներով ձեռք բերված իրերի, գումարի առկայություն:
- ✓ Ագրեսիվ վարքագիծ հասակակիցների, ծնողների, ուսուցիչների հանդեպ:
- ✓ Հասարակական նորմերի պահպանման դժվարություններ:
- ✓ Դրական վերաբերմունք բռնության տարբեր ձևերի նկատմամբ:
- ✓ Սեփական արարքների համար պատասխանատվության զգացման ցածր մակարդակ:
- ✓ Եսակենտրոն վարքագիծ, ուշադրության արժանանալու ձգտում:

Որտեղ է տեղի ունենում բուլինգը

Բուլինգը կարող է տեղի ունենալ ցանկացած վայրում, ցանկացած պահի, բայց կան որոշակի ժամանակներ և վայրեր, որոնք հատկապես նպաստում են բուլինգին:

Կիբերբուլինգ: Տեխնոլոգիաների հասանելիությունը նշանակում է, որ կիբերբուլինգը կարող է տեղի ունենալ շուրջօրյա, և սովորողի տունը կարող է նույնիսկ ապահով ապաստարան չլինել նման ճնշումից խուսափելու համար: Սովորողներն ավելի ու ավելի են շփվում այնպիսի ձևերով, որոնք հաճախ անհայտ են մեծահասակների համար և զերծ են վերահսկողությունից: Այս տեխնոլոգիաների բնույթը նշանակում է, որ թվային բովանդակությունը կարող է համօգտագործվել և դիտվել շատ լայն լսարանի կողմից գրեթե ակնթարթորեն, և գրեթե անհնար է ընդմիշտ ջնջել: Թեև կիբերբուլինգը հաճախ տեղի է ունենում տանը և գիշերը, ազդեցությունը կարող է զգացվել նաև դպրոցում:

«Անտեսանելի տարածքներ»: Դպրոցներում բուլինգը հաճախ տեղի է ունենում խաղահրապարակում, դպրոցի բակում, միջանցքներում, որտեղ չկան մեծահասակներ: Դպրոցական թաքնված կամ ծածկված մասերով տարածքները կարող են նպաստավոր միջավայր ստեղծել բուլինգի համար: Շատ խաղեր իրենց ֆիզիկական բնույթով բուլինգի հնարավորություն են տալիս: Համեմատաբար հեշտ է մեկ այլ սովորողի առանձնացնելն ու ճնշելը: Խաղերի ընթացքում առաջացող աղմուկը թաքցնում է տեղի ունեցողի մեծ մասը: Շարունակվող սադրանքը կարող է ի վերջո հանգեցնել ֆիզիկական ծեծկռտուքի:

---

[5] Янова Н.Г. От буллинга к антибуллингу: школьные программы профилактики агрессии. – Барнаул: Принт-Экспресс, 2021 – 180с. ISBN 978-5-6047152-0-8.

Զուգարանները, միջանցքները, հանդերձարանները, ճաշարանները, միջանցքները, մարզասրահը և դահլիճը կարող են բանավոր, սոցիալական և ֆիզիկական բուլինգի վայր լինել: Այդ տարածքներում սովորողների վարքագիծը մանրակրկիտ մշտադիտարկման կարիք ունի: Փաստաթղթի Հավելված 5-ում ներկայացված «Դպրոցում անվտանգ և վտանգավոր միջավայրերի բացահայտման թերթիկը» հնարավորություն է տալիս հայտնաբերել ուսուցիչների և սովորողների տեսակետները դպրոցում վտանգավոր և անվտանգ միջավայրերի մասին: Հարցաթերթը նախատեսված է ինչպես ուսուցչական կազմի, այնպես էլ սովորողների համար: Անհրաժեշտության դեպքում այն կարող են կիրառել նաև ծնողների հետ հարցումներ անցկացնելիս: Հարցաթերթի արդյունքների վերլուծությունն իրականացնում է դպրոցի հոգեբանը, որից հետո դրանք ներկայացվում են դպրոցի պատասխանատու խմբին և տնօրենին:

Բուլինգը դասարանում: Բուլինգը կարող է տեղի ունենալ նաև դասարանում: Այն կարող է լինել հայացքների, մեկնաբանությունների և քմծիծաղի միջոցով, բայց կարող է ունենալ ֆիզիկական բուլինգի ավելի բացահայտ ձև: Այն կարող է սրվել, եթե դասարանում տիրում է մթնոլորտ, որտեղ սովորողներին թույլատրվում է նվաստացնող մեկնաբանություններ անել իրենց դասընկերների կամ ուսուցիչների մասին: Եվ եթե սովորողները փորձում են բարձրաձայնել նման անհանգստացնող երևույթի մասին, ապա ուսուցիչները պետք է զգոն լինեն և, հետևաբար, լրացուցիչ հետաքննություն իրականացնեն: Բուլինգը կարող է տեղի ունենալ նաև դասամիջոցների ժամանակ:

«Դպրոցի ճանապարհը»: Դպրոցից դուրս գտնվող տարածքը, տեղի խանութները և խաղասրահները հաճախ բուլինգի համար նպաստավոր տարածքներ են դառնում: Բուլինգը կարող է տեղի ունենալ նաև ավտոբուսի կանգառում կամ դպրոց գնալու և դպրոցից վերադառնալու ընթացքում՝ անկախ նրանից՝ սովորողները գնում են քայլելով, հեծանվով, թե ավտոբուսով:

ՄԱՍ 1. ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ ԵՎ ԱՌԿԱ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

1.2 Իրավական շրջանակ

1.1.1 Պետության պարտավորությունները՝ երեխաներին պաշտպանելու բռնության բոլոր ձևերից, բխում են Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք կոնվենցիաներից, այդ թվում՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայից, Մարդու իրավունքների և հիմարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայից, Եվրոպայի խորհրդի Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին կոնվենցիայից, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայից, ինչպես նաև ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից[6]: Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրությամբ[7] արգելվում է երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնության և դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը:

1.1.2 «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից»:

1.2 Դպրոցներում բուլինգի կանխարգելմանն ու արձագանքմանն ուղղված առկա քաղաքականություն և ընթացակարգեր

1.2.1 Վերջին տարիների ընթացքում բուլինգի կանխարգելմանն ուղղված մի շարք ծրագրեր են իրականացվել Հայաստանում՝ ավելի դրական դպրոցական միջավայր ստեղծելու համար, սակայն խնդրի լուծմանն ուղղված համակարգային մոտեցում դեռևս չկա: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լրջորեն ծրագրված, պլանավորված և բոլոր

[6] Ք. Միխաիլիդի, Ա. Մանուկյան, «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» ուսումնական հաստատությունների անձնակազմի համար ուղեցույց, 2024

[7] Երեխաների իրավունքների մասին ՀՀ օրենք, https://www.arlis.am/ DocumentView.aspx?DocID=165162, ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, https:// www.arlis.am/DocumentView.aspx?docid=66138

դերակատարների կողմից համակարգված կանխարգելիչ աշխատանքներ չեն տարվում ոչ դպրոցներում, ոչ էլ համայնքում[8]:

1.2.2 Մինչ այժմ առավելապես անդրադարձ է արվում նրանց, ովքեր բուլինգի են ենթարկում, և նրանց, ովքեր բուլինգի են ենթարկվում: Թեև այս մոտեցումն առնչվում է բուլինգի անմիջական միջադեպին և ներգրավված հիմնական անձանց, այն անտեսում է շրջակա միջավայրի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են՝ դպրոցի մշակույթը, հասակակիցների և ականատեսների ազդեցությունը, ընտանեկան գործոնները, որոնք կարող են հսկայական ազդեցություն ունենալ բուլինգի դեպքերի դրսևորման վրա: Համալիր դպրոցական մոտեցման շրջանակներում բացառապես բուլինգ կիրառողի և բուլինգի ենթարկվողի անձնային գործոնների վրա կենտրոնանալը և այլ գործոնների անտեսումը կարող են խոչընդոտել դպրոցում բուլինգի դրսևորումների հաղթահարման արդյունավետ միջոցառումների ու քաղաքականության իրականացմանը (Ma, Stewin & Mah, 2001):

Դպրոցական բուլինգի կանխարգելման և



Գծապատկեր 1

[8] Ք. Միխաիլիդի, Ա. Մանուկյան, «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» ուսումնական հաստատությունների անձնակազմի համար ուղեցույց, 2024

ՄԱՍ 2. ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԲՈՒԼԻՆԳԻ ԿԱՆԽԱՐԳԵՄԱՆ ԵՎ ԱՐԶԱԳԱՆՔՄԱՆ (ՀԱԿԱԲՈՒԼԻՆԳԱՅԻՆ) ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Հետազոտությունները ցույց են տալիս, որ բուլինգի կանխարգելման լավագույն մոտեցումը համապարփակ ջանքերն են, որոնք անդրադառնում են դպրոցի, անձնակազմի և սովորողի մակարդակի գործոններին (Գծապատկեր 1):

2.1 Դպրոցի հակաբուլինգային քաղաքականություն և ընթացակարգեր (դպրոցի մակարդակ)

2.1.1 Հակաբուլինգային քաղաքականություն

Դպրոցներում հաբուլինգային քաղաքականություն ունենալը հնարավորություն է տալիս սովորողներին, ծնողներին, խնամակալներին և մասնագետներին բացահայտել ռիսկերը, փնտրել արձագանքման ուղիներ և մշակել լուծումներ՝ նախքան բուլինգի տեղի ունենալը[9]:

Դպրոցի մանկավարժական խորհուրդը տնօրենի ղեկավարությամբ իր հակաբուլինգային քաղաքականությունը մշակելիս պետք է համագործակցի դպրոցի ինչպես մանկավարժական, այնպես էլ վարչատնտեսական անձնակազմի հետ, ինչպես նաև ապահովի ծնողական և աշակերտական խորհուրդների մասնակցությունը այդ գործընթացին: Կարևոր է, որ բոլոր շահագրգիռ կողմերը հստակ պատկերացում ունենան քաղաքականության նպատակների և բովանդակության մասին, եթե այդ քաղաքականությունը պետք է հիմք հանդիսանա խնդրի լուծման արդյունավետ ռազմավարությունների մշակման համար:

Հակաբուլինգային քաղաքականության նպատակն է ուղղություն տալ և ուղղորդել դպրոցի ղեկավարությանը՝ կանխելու և արձագանքելու դպրոցներում բուլինգի հնարավոր դրսևորումներին, խթանել ապրումակցումը սովորողների միջև և ապահովել բուլինգի իրավիճակներին միջամտելու անվտանգ մեթոդներ: Հակաբուլինգային քաղաքականության խնդիրներն են.

[9] Swearer, S. M., Espelage, D. L., & Napolitano, S. A. (2009). *Bullying prevention and intervention: realistic strategies for schools.* Guilford Press.

ա) Ստեղծել դրական դպրոցական մշակույթ և մթնոլորտ, որը ներառում և ողջունում է տարբերությունները, որտեղ առկա է փոխադարձ հարգանք միմյանց առանձնահատկությունների հանդեպ և, որտեղ մեծահասակները ջերմ, դրական և վստահելի օրինակ են և խրախուսում են սովորողներին բացահայտելու և քննարկելու բուլինգի դրսևորումները:

բ) Իրազեկել ողջ դպրոցական համայնքին (ներառյալ դպրոցի ղեկավարությանը, ուսուցիչներին, սովորողներին, ծնողներին, կամավորներին և այլոց), որ բուլինգն անընդունելի վարքագիծ է:

գ) Սահմանել և կիրառել կանոններ և ընթացակարգեր, որոնք կենտրոնացած են բուլինգի դեպքերի ուսումնասիրման, կանխարգելման և արձագանքման վրա:

դ) Վերապատրաստել դպրոցի անձնակազմին և սովորողներին բուլինգի ճանաչման, հայտնաբերման, կանխարգելման և արձագանքման գործընթացների վերաբերյալ:

ե) Զգալիորեն բարելավել մեծահասակների վերահսկողությունը դպրոցի «անտեսանելի», հատկապես բարձր ռիսկայնություն ունեցող տարածքների վրա՝ խաղահրապարակ, սանհանգույցներ, միջանցք, ճաշարան, բակ և այլն:

զ) Ապահովել կրթական հաստատությունները մշտադիտարկման համակարգերով՝ տեսանկարահանող սարքերով, որոնք հնարավորություն կտան կանխարգելել բուլինգի դրսևորումները, ինչպես նաև վերահսկողության մեխանիզմներ, որոնք թույլ կտան պարբերաբար գնահատել դպրոցի հակաբուլինգային քաղաքականության արդյունավետությունը (հարցազրույցների իրականացում, կարիքների գնահատում և այլն):

է) Մշակել աջակցության ծրագիր նրանց համար, ովքեր ենթարկվել են բուլինգի, և նրանց համար, ովքեր ներգրավված են եղել բուլինգի վարքագծի մեջ.

ը) Իրականացնել գործողություններ՝ բուլինգի մեջ ներգրավված սովորողների վարքագիծը փոխելու համար և հետևել կարգապահական գործողություններին, եթե բուլինգի վարքագիծը շարունակվի:

թ) Ծնողներին և համայնքը ներգրավել դպրոցում իրականացվող ծրագրերին:

ժ) Նպաստել դպրոցի հակաբուլինգային քաղաքականության արդյունավետության շարունակական գնահատմանը:

Կանխարգելման քաղաքականությունը պետք է լինի բազմաճյուղ և բազմամասնագիտական և ներառի ընտանիքը և երեխաների պաշտպանության ցանցերը: Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետները և, հատկապես դպրոցի հոգեբանները, կարող են նպաստել այս տարբեր ոլորտների միջև ավելի մեծ համակարգմանը՝ օգնելով նրանց միավորել ուժերը՝ ձևավորելու անվտանգ միջավայր սովորողների համար:

Մանկավարժական խորհուրդները պետք է պաշտոնապես հաստատեն բուլինգի կանխարգելման և արձագանքման քաղաքականությունը, որն ամբողջությամբ կհամապատասխանի այս ընթացակարգերի պահանջներին: Դպրոցի հակաբուլինգային քաղաքականությունը պետք է հասանելի լինի դպրոցի անձնակազմին, հրապարակվի դպրոցի կայքում (կամ դրա բացակայության դեպքում, այլ կերպ հասանելի լինի ծնողներին և սովորողներին՝ ըստ ցանկության) և տրամադրվի ծնողական և աշակերտական խորհուրդներին: Դպրոցի հակաբուլինգային քաղաքականության պատճենը պետք է տրամադրվի կրթության պետական

կառավարման լիազորված մարմնին:

2.1.2 Բուլինգի կանխարգելման և արձագանքման ընթացակարգեր

Դպրոցներում բուլինգի կանխարգելման և արձագանքման հիմնական սկզբունքները պետք է լինեն.

- դրական դպրոցական մշակույթի և մթնոլորտի ձևավորումը,
- արդյունավետ ղեկավարումը,
- իրազեկման միջոցառումների իրականացումը,
- միասնական ըմբռնումը, թե ինչ է բուլինգը և դրա ազդեցությունը,
- արդյունավետ հսկողությունն ու մշտադիտարկումը,
- աջակցությունը անձնակազմին,
- բուլինգի վարքագծի հետևողական գրանցումը, բուլինգի հայտաբերումը և ուղղորդումը (ներառյալ աջակցության տրամադրումը նրանց համար, ովքեր ենթարկվել են բուլինգի և աջակցության ծրագրի մշակումը նրանց համար, ովքեր ներգրավված են եղել բուլինգի վարքագծի մեջ),
- հակաբուլինգային քաղաքականության արդյունավետության շարունակական գնահատումը,
- հակաբուլինգային քաղաքականության իրականացման հաշվետվողականությունը*:

2.1.3 Դպրոցական դրական մշակույթի և մթնոլորտի ձևավորում

Բուլինգի կանխարգելման հիմնաքարը դպրոցական դրական մշակույթն ու մթնոլորտն է, որը ողջունում է տարբերություններն ու բազմազանությունը և հիմնված է ներառականության և հարգանքի վրա: Բուլինգի վերաբերյալ դպրոցի քաղաքականությունն առավելապես արդյունավետն է, երբ աջակցվում է դրական դպրոցական մթնոլորտով, որը խրախուսում է հարգանքը, վստահությունը, հոգատարությունը, ուշադրությունը ուրիշների հանդեպ (Գծապատկեր 2):

Դպրոցական դրական մթնոլորտի որոշակի ցուցանիշ է, երբ սովորողները.

- Կարող են ազատորեն շփվել ուսուցիչների և հասակակիցների հետ:
- Զգում են իրենց գոհ, պատկանելի և գնահատված:
- Տեղյակ են, թե ինչ վարք են իրենցից սպասում, ինչպես նաև գիտեն կանոններին և նորմերին չենթարկվելու հետևանքների մասին:

Դպրոցական դրական մշակույթի առանցքային նշանակությունը դպրոցական համայնքի միջև կամ ներխմբային հարգալից հարաբերություններն են: Սա ներառում է հասակակիցների միջև հարաբերությունները (օրինակ՝ սովորող-սովորող, ուսուցիչ-ուսուցիչ) և խմբերի միջև հարաբերությունները (օրինակ՝ ուսուցիչներ և սովորողներ, ծնողներ և ուսուցիչներ և այլն): Բուլինգը կանխարգելելու համար ուսուցիչները կարող են դիտարկել դասարանում հարգանքը,

* Սկզբունքների մասին մանրամասն ներկայացված է 2.1.3 - 2.1.11 կետերում:

դրական հարաբերությունները և կարգուկանոնը խթանելու հետևյալ ուղիները.

- *Ստեղծել կանոններ՝ ընդդեմ բուլինգի և հետևել դրանց:* Սովորողների հետ կանոններ մշակելը, նրանց կողմից հարգանքի և պատասխանատվության իրենց միջավայրը ինքնուրույն սահմանելը նպաստում է այդ միջավայրի իրական նախադրյալների ստեղծմանը: Կարևոր է նաև աջակցել կանոնների պահպանմանը: Ուսուցիչները պետք է սովորողների համար օրինակ դառնան և հենց իրենք հետևեն կանոններին: Կարևոր է խրախուսել սովորողների դրական վարքագիծը և խուսափել հրապարակավ հանդիմանելուց: Պետք է օգնել սովորողներին հասկանալ, որ կանոնները խախտելը հանգեցնում է հետևանքների. «Ես գիտեմ, որ դուք կարող եք դադարեցնել բացասական գործողությունները և վերադառնալ դրական գործողությունների: Եթե դուք ընտրում եք շարունակելը, ապա կլինեն հետևանքներ»:
- *Ուշադրություն դարձնել խմբային աշխատանքներին:* Երբ ուսուցիչը խմբային աշխատանքներ կամ նախագծեր է իրականացնում, կարևոր է անընդհատ փոփոխել խմբերը, որպեսզի սովորողներին հնարավորություն ընձեռվի ճանաչել իրենց ընկերական շրջանակից դուրս այլ սովորողների:
- *Խրախուսել դրական վարքագիծը:* Ուսուցիչները կարող են դասարանի հետ կիսվել որևէ սովորողի օրինակով, ով այդ շաբաթ ինչ-որ մեկին օգնել է դպրոցում, տանը կամ համայնքում: Կարևոր է հիշեցնել սովորողներին, որ յուրաքանչյուրի խնդիրն է դպրոցը սովորելու համար դրական վայր դարձնելը (Գծապատկեր 2): Անհրաժեշտ է խրախուսել սովորողներին՝ խոսել ուսուցիչների կամ այլ վստահելի մեծահասակների հետ, եթե նրանք ականատես են լինում բուլինգի կամ անհանգստանում են ինչ-որ մեկի համար:

Դպրոցներում բուլինգի կանխարգելման որոշ գործնական օրինակներ ներկայացված են Հավելված 1-ում:

Կրթական գործընթացի յուրաքանչյուր մասնակից պետք է նպաստի դրական դպրոցական



Գծապատկեր 2

Դպրոցները պետք է խրախուսեն բաց երկխոսությունը դպրոցի անձնակազմի և սովորողների միջև: Պետք է հնարավորություն ընձեռել սովորողներին՝ բարձրաձայնելու իրենց մտահոգությունները հարմարավետ միջավայրում: Այս երկխոսությունը պետք է ներառի նաև այն խնդիրները, որոնք տեղի են ունենում դպրոցից դուրս, ներառյալ՝ կիբերհարձակումը:

Դպրոցական դրական մշակույթի և մթնոլորտի ձևավորման որոշ գործնական խորհուրդներ ներկայացված են Հավելված 2-ում:

2.1.4 Արդյունավետ ղեկավարում

Ղեկավարումը, որն աջակցում է բազմազանությունը խրախուսող դպրոցական մշակույթի և մթնոլորտի ձևավորմանը, լավ փորձառության բանալին է: Դպրոցում ղեկավար դեր ունեցող բոլոր անձանց դերը մեծ նշանակություն ունի բուլինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում: Դպրոցներում հակաբուլինգային քաղաքականության ներդնման, իրականացման և գնահատման գործընթացների պատասխանատուն դպրոցի տնօրենն է, իսկ այդ գործընթացների կազմակերպման և համակարգման պատասխանատուն՝ տնօրենի տեղակալը:

2.1.5 Իրազեկման միջոցառումների իրականացում

Սովորողներին, ծնողներին և ուսուցիչներին սովորեցնելը, թե ինչ է իրենից ներկայացնում բուլինգը, ինչպես և երբ է պետք միջամտել, կարող է օգնել հասկանալ և կանխել բուլինգի

վնասակար էությունը:

Սովորողների, դպրոցական անձնակազմի և ծնողների իրազեկվածության բարձրացումը կարևոր է բուլինգը կանխելու համար: Ուսուցիչները պետք է համակողմանիորեն անդրադառնան բուլինգի դրսևորումներին և կանխեն այն՝ հասկանալով դրա տեսակները, ազդեցությունները և կանխարգելման մեթոդները, իսկ սովորողները պետք է ծանոթ լինեն իրենց պաշտպանությանն առնչվող հիմնական հասկացություններին և սկզբունքներին[10]: Դպրոցները կարող են կազմակերպել իրազեկման ծրագրեր՝ ընդգծելով բուլինգի տարբեր ձևերը և դրանց հետևանքները:

Իրազեկումը կարող է ունենալ տարբեր ձևեր՝ մանկավարժական անձնակազմի հանդիպումներ, մեկօրյա դասընթացներ, քննարկումներ և խորհրդատվություններ: Դպրոցները կարող են ընտրել վերապատրաստման այս տարբերակների ցանկացած համակցություն՝ հիմնված առկա ֆինանսավորման, անձնակազմի ռեսուրսների և ժամանակի վրա:

Սովորողների բուլինգի իրազեկվածության մակարդակը գնահատելու համար դպրոցի հոգեբանը կարող է կիրառել Հավելված 3-ում ներկայացված «Բուլինգի վերաբերյալ իրազեկման մակարդակի ստուգման հարցարանը»: Հարցարանի արդյունքների վերլուծությունն իրականացնում է դպրոցի հոգեբանը, որից հետո վերլուծության արդյունքները ներկայացվում են դպրոցի պատասխանատու խմբին և տնօրենին:

2.1.6 Միասնական ըմբռնում, թե ինչ է բուլինգը, և դրա ազդեցությունը

Դպրոցը պետք է իրականացնի համապատասխան միջոցառումներ՝ ապահովելու, որ դպրոցական համայնքի բոլոր անդամները ընդհանուր պատկերացում ունենան այն մասին, թե ինչ է բուլինգը, որոնք են բուլինգի տեսակները, ներգրավված մասնակիցները և դրա հետևանքները: Երեխաները և մեծահասակները տարբեր կերպ են ընկալում բուլինգի դրսևորումները: Համայնքները, ներառյալ դպրոցները, նորմալ են համարում բուլինգի որոշ դրսևորումներ: Երբ աշակերտները սովորում են ճանաչել բուլինգը, նրանք մեծացնում են նաև խնդրի մասին իրենց իրազեկությունը և սկսում են ապրումակցում դրսևորել բուլինգի ենթարկված սովորողների նկատմամբ:

2.1.7 Արդյունավետ վերահսկողություն և մշտադիտարկում

Դպրոցներում պետք է գործեն ռիսկային իրավիճակների, բուլինգի հայտնաբերման և ուղղորդման ներքին մեխանիզմներ: Անհրաժեշտ է հստակություն մտցնել, թե ում պետք է զեկուցել երեխաների հանդեպ բուլինգի դրսևորումների հայտնաբերման դեպքում:

Դպրոցի ղեկավարության պարտականությունն է անձնակազմի և աշակերտների հետ համատեղ մշակել մի համակարգ, որը թույլ կտա վերահսկողական և մշտադիտարկման արդյունավետ միջոցներ կիրառել ինչպես բուլինգի վարքագիծը կանխելու, այնպես էլ դրա դեմ պայքարելու համար: Լավ վերահսկողության և մշտադիտարկման համակարգերը նաև նպաստում են վաղ

[10] Nur, Asyah., Rizqy, Fadhlina, Putri., Rini, Fadhillah, Putri. (2023). Pelaksanaan Teknik Bimbingan dan Konseling Bagi Guru Untuk Mengatasi Perilaku Bullying di Sekolah. doi: 10.59342/jpkm.v2i2.152

միջամտությանը: «Թեժ կետերի» և «թեժ ժամանակների» նույնականացումը կարող է շատ օգտակար լինել դպրոցում բուլինգի կանխարգելման և դրա դեմ պայքարում: Բոլոր սովորողները և հատկապես ավագ դպրոցի սովորողները կարող են դիտվել որպես բուլինգի դեմ պայքարին աջակցող ռեսուրս:

Աշակերտական խորհուրդները, ինչպես նաև դպրոցական այլ ակումբներն ու համայնքները նույնպես կարող են շատ կարևոր լինել: Դպրոցի վարչատնտեսական անձնակազմը նույնպես պետք է նպաստի և լինի այս գործընթացի մաս: Բացի այդ, պետք է մշակվեն ռազմավարություններ և միջոցառումներ՝ բոլոր ծնողներին ներգրավելու համար:

2.1.8 Աջակցությունը անձնակազմին

Դպրոցի ղեկավարությունը պետք է ապահովի, որ դպրոցի անձնակազմը բավականաչափ ծանոթ լինի դպրոցի հակաբուլինգային քաղաքականությանը, որպեսզի նրանց հնարավորություն ընձեռվի արդյունավետ և հետևողականորեն կիրառել այդ քաղաքականությունը, պետք է հնարավորություն տա անձնակազմին ճանաչել բուլինգը, կիրառել բուլինգի կանխարգելման արդյունավետ ռազմավարություններ և, անհրաժեշտության դեպքում, արդյունավետ միջամտել բուլինգի դեպքերին: Դպրոցի ղեկավարությունը պետք է նաև համապատասխան միջոցներ ձեռնարկի, որպեսզի համոզվի, որ ժամանակավոր փոխարինող կամ նոր անձնակազմը բավականաչափ իրազեկված լինի դպրոցի կանոնների և հակաբուլինգային քաղաքականության մասին:

2.1.9 Բուլինգի վարքագծի հետևողական գրանցումը, բուլինգի հայտաբերումը և ուղղորդումը

Արդյունավետ փորձառության համար էական նշանակություն ունի բուլինգի դեմ պայքարի հետևողական և հստակ մոտեցումը: Սովորողը կամ ծնողը կարող է բուլինգի մասին մտահոգություն հայտնել դպրոցի ցանկացած ուսուցչի, որն էլ, իր հերթին, պետք է կարողանա արագ արձագանքել ստեղծված իրավիճակին: Այս կետում մանրամասն ներկայացված են անհրաժեշտ գործողությունները կապված բուլինգի մասին հաղորդումների հետևողական գրանցման, բուլինգի հայտնաբերման և ուղղորդման գործընթացների ապահովման հետ:

Հաղորդում

Ցանկացած դեպքում, երբ ուսուցչի կողմից պարզվել է, որ դրսևորվել է բուլինգի վարքագիծ, նա պետք է կապ հաստատի բուլինգի մեջ ներգրավված սովորողների ծնողների հետ՝ խնդրի մասին նրանց տեղեկացնելու և բացատրելու ձեռնարկվող գործողությունները (հղում կատարելով դպրոցի քաղաքականությանը): Բուլինգի վերաբերյալ բոլոր հաղորդումները, ներառյալ անանուն հաղորդումները, պետք է ուսումնասիրվեն և քննարկվեն համապատասխան ուսուցչի կողմից:

Դպրոցներում որպես կանխարգելման և արձագանքման ռազմավարություն կարելի է կիրառել հետևյալ մոտեցումները.

- **Բուլինգի դրսևորումների մշտադիտարկում և արձանագրում:** Ուսուցիչները կարող են գրանցել բուլինգի վարքագիծը սույն փաստաթղթի Հավելված 4-ի ձևանմուշում, որի

պատճենը, ըստ անհրաժեշտության, պետք է տրամադրել դպրոցի տնօրենին կամ տնօրենի տեղակալին:

- **Անանուն էլեկտրոնային փոստի կիրառում**: Այս էլեկտրոնային փոստին դպրոցի յուրաքանչյուր սովորող կարող է անանուն նամակ ուղարկել բոլոր այն դեպքերում, երբ իր նկատմամբ կիրառվել է բուլինգ, կամ ինքն ականատես է եղել բուլինգի որևէ դրսևորման:
- **Հետազոտական աշխատանքների պարբերաբար իրականացում** սովորողների, ծնողների, ուսուցիչների շրջանում՝ հատուկ մշակված հետազոտական թերթիկների միջոցով:

Արձագանքում

Նկատելով կամ անգամ կասկածելով բուլինգի որևէ դրսևորում՝ ուսուցիչը պետք է լրջորեն վերաբերվի այդ հանգամանքին և անհապաղ քայլեր ձեռնարկի՝ արձագանքելով ստեղծված իրավիճակին: Կարևոր է, որ ուսուցիչները հստակ պատկերացնեն, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկել, որպեսզի պատրաստ լինեն արձագանքել բուլինգի դեպքերին: Եթե ուսուցիչը կամ ծնողը կասկածում է, որ երեխան ենթարկվել է բուլինգի, նա պետք է ձեռնարկի հետևյալ քայլերը.

- հանգիստ արձագանքել, պահպանել հանգստություն ցանկացած իրավիճակում,
- հավաստիացնել երեխային, որ նա ճիշտ է վարվել՝ դիմելով իրեն, բայց զգուշացնել, որ կարող է համապատասխան մասնագետներին հայտնել տեղի ունեցածի մասին, որպեսզի հնարավոր լինի ապահովել անհրաժեշտ օգնությունը,
- լրջորեն վերաբերվել երեխայի ասածներին, նույնիսկ եթե դա վերաբերում է մեկին, ով, նրա համոզմամբ՝ չի կարող վնասել երեխային,
- դեպքի մասին անհապաղ հայտնել դպրոցի Գնահատման թիմին, որն էլ իր հերթին կդիմի դպրոցի արձագանքման թիմին՝ համապատասխան քայլեր ձեռնարկելու համար[11]:
- Դպրոցի մանկարժական անձնակազմից ընտրվում է բուլինգի դեպքերի գնահատման համար պատասխանատու խումբ՝ երեք ուսուցիչ և մեկ հոգեբան, ովքեր բուլինգի դրսևորման ցանկացած իրավիճակի դեպքում գնահատում են բուլինգի վարքագծի հետևանքներն ու ռիսկերը՝ համաձայն Հավելված 6-ում ներկայացված չափանիշների:

Բուլինգի դեպքին արձագանքելու համար դպրոցը կարող է նշանակել Արձագանքման պատասխանատու անձ և բուլինգի միջադեպերը ղեկավարելու պատասխանատվությունը վերապահել դպրոցի արձագանքման թիմին: Արձագանքման թիմի անդամներին հաղորդվող բուլինգի միջադեպերի մասին տեղեկատվությունը պետք է փոխանցվի դպրոցի տնօրենին և սովորողների ուսուցիչներին: Դեպքերը ուսումնասիրելիս Գնահատման և Արձագանքման թիմերը պետք է ապահովեն առավելագույն գաղտնիություն, եթե այլ բան չեն պահանջում գործի բնույթն ու ծանրությունը:

Արձագանքման թիմը բաղկացած է.

- ուսումնական հաստատության ղեկավարից,

[11] Ք. Միխաիլիդի, Ա. Մանուկյան, «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» ուսումնական հաստատությունների անձնակազմի համար ուղեցույց, 2024

- սովորողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպչից,
- ցանկացած այլ անդամից, ըստ անհրաժեշտության:

Ուղղորդում

Դպրոցի շրջանակներում մանկավարժահոգեբանական արդյունավետ աջակցության տրամադրման դեպքում բուլինգի ենթարկված կամ բուլինգի ենթարկող երեխաներից շատերը կարող են չունենալ լրացուցիչ մասնագիտացված ծառայությունների կարիք: Այնուամենայնիվ, եթե որևէ խնդիր շարունակում է երեխային լուրջ անհանգստություն պատճառել, ապա Արձագանքման թիմը որոշում է, թե ինչ ուղղորդում և ինչ միջամտություններ են անհրաժեշտ (Հավելված 5):

Առավել ծանր դեպքերում խումբը կամ տնօրենը տեղեկացնում են դրա մասին երեխաների պաշտպանության պատասխանատուներին:

2.1.10 Հակաբուլինգային քաղաքականության արդյունավետության շարունակական գնահատումը

Դպրոցի ղեկավարությունը պետք է նպաստի հակաբուլինգային քաղաքականության արդյունավետության շարունակական գնահատմանը, որի արդյունքում դպրոցի հակաբուլինգային քաղաքականությունը կարող է վերանայվել: Դպրոցը պետք է նախատեսի առկա կանխարգելման և արձագանքման գործողությունների պարբերական ուսումնասիրություն: Սովորողների, անձնակազմի և ծնողների հարցումները, եթե պատշաճ կերպով անցկացվեն, կարող են կարևոր տեղեկատվություն տրամադրել գործող հակաբուլինգային միջոցառումների արդյունավետության մասին:

Դպրոցի տնօրենին կամ տնօրենի տեղակալին բուլինգի վարքագիծը գրանցելու և զեկուցելու համար նախատեսված Հավելված 4-ի ձևանմուշը կարող է լինել դպրոցում բուլինգի վարքագծի մասին արժեքավոր և հասանելի տվյալների աղբյուր: Այս հաշվետվություններից հավաքված տվյալները պետք է կանոնավոր կերպով (առնվազն յուրաքանչյուր ուսումնական տարում մեկ անգամ) հավաքվեն և վերլուծվեն՝ նպատակ ունենալով վերահսկել բուլինգի վարքագծի մակարդակը և բացահայտելու որևէ հատուկ խնդիր, որը ուշադրություն է պահանջում կամ վարքագծի որևէ էական միտում: Այս վերլուծության գրառումը պետք է պահպանվի և հասանելի լինի դպրոցի մանկավարժական խորհրդին: Բացահայտված ցանկացած խնդրին պետք է համապատասխան արձագանքներ կազմվեն և իրականացվեն:

Խորհուրդ է տրվում, որ հակաբուլինգային քաղաքականության իրականացումն ու արդյունավետությունը ներառել մանկավարժական խորհրդի հանդիպումների օրակարգ, որպեսզի ապահովվի, որ քաղաքականության կամ կոնկրետ սովորողների բարեկեցության վերաբերյալ մտահոգությունները կիսվեն և արդյունավետ կերպով լուծվեն:

2.1.11 Հակաբուլինգային քաղաքականության իրականացման հաշվետվողականությունը

Դպրոցի վերահսկողության մեխանիզմները պահանջում են, որ ուսումնական տարվա

յուրաքանչյուր կիսամյակում առնվազն մեկ անգամ տնօրենը հաշվետվություն ներկայացնի մանկավարժական խորհրդին՝ ներկայացնելով.

- Խորհրդին նախորդող զեկույցից ի վեր տնօրենին կամ տնօրենի տեղակալին զեկուցված բուլինգի դեպքերի ընդհանուր թիվը (ըստ Հավելված 4-ում ներկայացված բուլինգի գրանցման ձևանմուշի) և հաստատում, որ այս բոլոր դեպքերը լուծվել են կամ դեռևս ընթացքի մեջ են դպրոցի հակաբուլինգային քաղաքականության և այս ընթացակարգերի համաձայն:
- Կատարված քայլերը՝ ուղղված բուլինգի նվազեցմանը, այդ թվում իրազեկման գործողություններ, դասընթացներ և վերապատրաստումներ:
- բուլինիգի միջադեպերի՝ ավելի հաճախակի դառնալու դեպքում բացատրությունները:

Հաշվետվությունները պետք է հրապարակվեն դպրոցի կայքում՝ ապահովելով անձերի նույնականացման հնարավորության բացակայությունը:

2.2 Մանկավարժական անձնակազմի վերապատրաստումներ (անձնակազմի մակարդակ)

2.2.1. Վերապատրաստումները և սեմինարները կարող են գործիքներ տրամադրել բուլինգի ճանաչման, կանխարգելման և հաղթահարման համար: Ապահովելու համար բուլինգի կանխարգելման ջանքերի հաջողությունը դպրոցի ողջ անձնակազմը պետք է վերապատրաստվի և իմանա, թե ինչ է բուլինգը, որոնք են դպրոցի քաղաքականությունն ու կանոնները, և ինչպես կիրառել այդ կանոնները:

Անհրաժեշտ է նաև, որ ուսուցիչները վերապատրաստվեն՝ ռիսկերը ճանաչելու և սովորողների նկատմամբ բուլինգի իրավիճակներին արդյունավետորեն արձագանքելու համար, ներառյալ ուսուցիչ-սովորող կամ ծնող-սովորող իրավիճակները:

2.3 Սոցիալ-հուզական ուսումնառության ծրագիր (սովորողի մակարդակ)

2.3.1. Դպրոցներում բուլինգի կանխարգելման և արձագանքման մեկ այլ կարևոր ռազմավարություն էլ սովորողների սոցիալ-հուզական հմտությունների զարգացման վրա կենտրոնանալն է: Սոցիալ-հուզական հմտություններն օգնում են բոլոր նրանց, ովքեր

ներգրավված են բուլինգի մեջ և կարող են հեշտությամբ կիրառվել դպրոցում[12]: Ուսումնական ծրագրերը, որոնք սովորեցնում են սոցիալ-հուզական հմտություններ, օգնում են ստեղծել ֆիզիկապես և հուզական առումով ապահով դպրոցական միջավայր և նույնիսկ բարձրացնել սովորողների կրթական ձեռքբերումները[13]:

2.3.2. **Ապրումակցում:** Ապրումակցման բաղադրիչներից մեկը ուրիշին զգալու և հասկանալու կարողությունն է: Պարզվել է, որ այս հմտությունը օգնում է կանխել բուլինգը: Եվ բուլինգի ենթարկող, և բուլինգի ենթարկվող սովորողների հետ համեմատած՝ պրոսոցիալական վարքագիծ ունեցող երեխաները ապրումակցման ավելի մեծ կարողություններ են ցուցաբերում[14]: Ուրիշների զգացմունքների, վարքի հիմքում ընկած պատճառների ավելի խորքային հասկացումը ոչ միայն թույլ է տալիս սովորողներին հարգանքով և բարությամբ վերաբերվել միմյանց, այլև կարող է ստիպել նրանց միջամտել բուլինգի իրավիճակներին: Հասակակիցների նկատմամբ ապրումակցումը ստիպում է ականատեսներին նաև միջամտել՝ բուլինգը դադարեցնելու համար[15] [16]:

Դպրոցներում բուլինգի կանխարգելման և արձագանքման գործում պետք է ըստ արժանվույն կարևորել սովորողների մոտ ապրումակցման հմտությունների ձևավորումը: Մասնավորապես, անհրաժեշտ է նրանց սովորեցնել բացահայտել իրենց հույզերը, հասկանալ ուրիշների հույզերը և հոգատարություն և ապրումակցում ցուցաբերել ուրիշների հանդեպ: Ապրումակցման դասերի մեկ այլ հիմնական բաղադրիչը հեռանկարների ուսուցումն է, այսինքն՝ հասկանալը, թե ինչ են մտածում կամ զգում ուրիշները: Հետազոտությունները ցույց են տվել, որ լավ հեռանկարներ փնտրելու հմտություններ ունեցող սովորողների ֆիզիկական, բանավոր և անուղղակի ագրեսիան հասակակիցների նկատմամբ ավելի քիչ հավանական է[17]:

2.3.3. **Հուզական կարգավորում:** Հույզերի կառավարումը ուժեղ հուզական դրսևորումների դեպքում սեփական և ուրիշների հույզերը կառավարելու ունակությունն է: Այն հատկապես կարևոր հմտություն է դրական հարաբերություններ կառուցելու համար: Հույզերի կառավարման բացակայությունը կարող է սովորողին ավելի խոցելի դարձնել բուլինգի նկատմամբ: Հետազոտությունը ցույց է տալիս, որ սովորողները իրենց հասակակիցների կողմից ավելի շատ են բուլինգի ենթարկվում, եթե նրանք հիպերակտիվ են, դրսևորում են հուզական պոռթկումներ կամ հուզականորեն անկայուն են[18]: Խնդիրը սրվում է այն պարագայում, երբ բուլինգի ենթարկվող սովորողները արձագանքում են ճնշմանը բարձր հուզական ռեակցիաներով, ինչպիսիք են

[12] Ragozzino, K., & Utne O'Brien, M. (2009). Social and emotional learning and bullying prevention. Retrieved from http://casel.org/downloads/2009_bullyingbrief.pdf
[13] Durlak, J. A., Weissberg, R. P., Dymnicki, A. B., Taylor, R. D., & Schellinger, K. B. (2011). The impact of enhancing students' social and emotional learning: A meta-analysis of schoolbased universal interventions. Child Development, 82(1), 405–432.
[14] Warden, D., & MacKinnon, S. (2003). Prosocial children, bullies and victims: An investigation of their sociometric status, empathy and social-problem solving strategies. British Journal of Developmental Psychology, 21(3), 367–385.
[15] Nickerson, A. B., Mele, D., & Princiotta, D. (2008). Attachment and empathy as predictors of roles as defenders or outsiders in bullying interactions. Journal of School Psychology, 46(6), 687–703.
[16] Rigby, K., & Johnson, B. (2007). Playground heroes: Who can stop bullying? Greater Good Magazine, 3(2), 14–17.
[17] Litvack-Miller, W., MacDougall, D., & Romney, D. M. (1997). The structure of empathy during middle childhood and its relationship to prosocial behaviour. Genetic, Social and General Psychology Monographs, 123, 303–324.
[18] Rodkin, P. C., & Hodges, E. V. E. (2003). Bullies and victims in the peer ecology: Four questions for psychologists and school professionals. School Psychology Review, 32(3), 384–400.

բղավելը, գոռալը կամ լացը[19]: Հետազոտությունը ցույց է տվել նաև, որ սովորողների՝ ուրիշներին բուլինգի ենթարկելու հավանականությունն ավելին է, եթե նրանք չունեն հույզերի կառավարման հմտություններ: Սոցիալ-հուզական ուսումնառության ծրագրի «Հույզերի կարգավորում» բաժնի գործողությունները կօգնեն սովորողներին զարգացնել հույզերը կառավարելու հմտությունները:

2.3.4. **Սոցիալական խնդիրների լուծում:** Սոցիալական խնդիրների լուծումը սոցիալական խնդիրների և մարտահրավերների միջով հաջողությամբ նավարկելու կարողությունն է: Սովորողները, ովքեր ունեն սոցիալական խնդիրների լուծման կարողություններ, կարող են ճանաչել խնդիրը, մտածել հնարավոր լուծումների մասին և հասկանալ որոշակի գործողության հետևանքները: Հետազոտությունը ցույց է տվել, որ և՛ բուլինգի ենթարկող, և՛ բուլինգի ենթարկվող սովորողները ունեն սոցիալական խնդիրներ լուծելու հմտությունների ցածր մակարդակ[20]: Նրանք, ովքեր, օրինակ, բուլինգի վարքագիծ են դրսևորում, հաճախ ավելի ագրեսիվ պատկերացումներ ունեն այն մասին, թե ինչպես վարվել կոնֆլիկտների ժամանակ[21]: Բուլինգի ենթարկվող աշակերտները նույնպես չունեն սոցիալական խնդիրների լուծման արդյունավետ հմտություններ[22]: Նրանք կարող են պասիվ վարք դրսևորել սոցիալական իրավիճակներում, ինչը կարող է հրահրել ուրիշներին նրանց բուլինգի ենթարկվելու[23]: Սոցիալական իրավիճակների արդյունավետ կառավարումը կարևոր հմտություն է նաև նրանց համար, ովքեր ականատես են բուլինգին: Սոցիալական իրավիճակը ճիշտ գնահատելով և միջամտելու համապատասխան որոշում կայացնելով՝ ականատեսները կարող են օգնել դադարեցնել բուլինգը:

Սոցիալ-հուզական ուսումնառության ծրագրի այս բաղադրիչը ընդգծում է սոցիալական խնդիրների լուծման հմտությունների ուսուցման կարևորությունը: Մասնավորապես, այս ձևով երեխաներին սովորեցնում են ճանաչել սոցիալական խնդիրը, ստեղծել խնդրի բազմաթիվ լուծումներ, կանխատեսել հետևանքները և, ի վերջո, ընտրել ողջամիտ լուծում, որն անվտանգ և հարգալից է:

2.3.5. **Ընկերական փոխհարաբերությունների կառուցում:** Սոցիալական կարգավիճակը և փոխհարաբերությունները բուլինգի կարևոր տարր են: Ցածր սոցիալական կարգավիճակը կապված է բուլինգի ենթարկվելու հետ[24] [25]: Բուլինգի ենթարկված երեխաները հակված են ավելի քիչ ընկերներ ունենալ: Սովորողները, ովքեր բուլինգի վարքագիծ են դրսևորում, նույնպես հաճախ չունեն համապատասխան սոցիալական հմտություններ, այնուամենայնիվ, նրանցից շատերն ունեն բարձր սոցիալական կարգավիճակ և օգտագործում են այս կարգավիճակը՝ իրենց իշխանությունը պարտադրելու իրենց զոհերին: Ականատեսները հաճախ նշում են սոցիալական

---

[19] Goldbaum, S., Craig, W. M., Pepler, D., & Connolly, J. (2006). Developmental trajectories of victimization: Identifying risk and protective factors. In J. E. Zins, M. J. Elias, & C. A. Maher (Eds.), Bullying, victimization, and peer harassment. (pp. 143–160). New York: Haworth Press.
[20] Cook, C. R., Williams, K. R., Guerra, N. G., Kim, T. E., & Sadek, S. (2010). Predictors of bullying and victimization in childhood and adolescence: A meta-analytic investigation. School Psychology Quarterly, 25, 65–83.
[21] Olweus, D. (1993). Bullying at school. Malden, MA: Wiley-Blackwell.
[22] Cook, C. R., Williams, K. R., Guerra, N. G., Kim, T. E., & Sadek, S. (2010). Predictors of bullying and victimization in childhood and adolescence: A meta-analytic investigation. School Psychology Quarterly, 25, 65–83.
[23] Hodges, E. V. E., & Perry, D. G. (1999). Personal and interpersonal antecedents and consequences of victimization by peers. Journal of Personality and Social Psychology, 76(4), 677–685.
[24] Perren, S., & Alsaker, F. D. (2006). Social behavior and peer relationships of victims, bullyvictims, and bullies in kindergarten. Journal of Child Psychology and Psychiatry, 47(1), 45–57.
[25] Hodges, E. V. E., & Perry, D. G. (1999). Personal and interpersonal antecedents and consequences of victimization by peers. Journal of Personality and Social Psychology, 76(4), 677–685.

կարգավիճակը կորցնելու վախը որպես բուլինգի ենթարկված դասընկերներին չաջակցելու պատճառներից մեկը[26]: Այսպիսով, սոցիալական հարաբերությունների բարելավումը և սոցիալական հիերարխիայի մեղմացումը կարող են օգնել կանխել բուլինգը: Այս հմտությունների զարգացման հիմնական նպատակներից մեկն է օգնել սովորողներին ձեռք բերել ընկերներ և ավելի լավ հարաբերություններ հաստատել հասակակիցների հետ՝ բարձրացնելով ընկերական հարաբերություններ կառուցելու հմտությունները: Սովորողներին սովորեցնում են արդար խաղալ (օրինակ՝ կիսվել, հերթ պահել և հետևել կանոններին), վերացնել հասակակիցների բացառումը և հարգալից վերաբերվել հասակակիցներին: Հաջողությամբ ընկերներ ձեռք բերելու և պահելու կարողությունը կարևոր պաշտպանիչ գործոն է բուլինգի ենթարկվելու դեմ: Այն սովորողները, ովքեր ունեն առնվազն մեկ ընկեր, ավելի քիչ հավանական է, որ բուլինգի ենթարկվեն հասակակիցների կողմից, իսկ բուլինգի ենթարկված սովորողները, ովքեր ունեն լավ ընկերներ, ավելի քիչ կենթարկվեն ճնշման և հուզական և վարքային խնդիրներ ունենալու վտանգի[27] [28]:

2.3.6. **Ինքնավստահություն** (*անգլ.՝* assertive - ինքնավստահ): Դրական հարաբերություններ կառուցելու մեկ այլ բաղադրիչ է հասկանալը, թե ինչպես և երբ պետք է ինքնավստահ լինել: Կարևոր է երեխաներին սովորեցնել, թե ինչպես տարբերել ագրեսիվ, պասիվ և ինքնավստահ արձագանքները: Ինքնավստահ լինել սովորելը հատկապես կարևոր է այն սովորողների համար, ովքեր կարող են բուլինգի ենթարկվել, ուստի նրանք ավելի հաճախ չեն թիրախավորվում[29]: Բացի այդ, ինքնավստահություն սովորելը կարող է օգնել ականատեսներին օգտագործել բուլինգը դադարեցնելու կամ մեծահասակներից օգնություն խնդրելու ռազմավարություններ[30] [31]:

Աղյուսակ 1

Սոցիալ-հուզական հմտություններ + օգուտներ ըստ բուլինգի դերերի

Սոցիալ-հուզական հմտություններ	Բուլինգի ենթարկվող	Բուլինգի ենթարկող	Ականատես
	Քիչ հավանական է, որ կենթարկվեն բուլինգի կամ վնաս կկրեն բուլինգից:	Քիչ հավանական է, որ կենթարկեն բուլինգի:	Ավելի հավանական է, որ համապատասխան արձագանք կտան
Ապրումակցում		✓	✓

[26] National Crime Prevention Council. (2012). Bullying. Retrieved from http://www.ncpc.org/ topics/bullying.
[27] Goldbaum, S., Craig, W. M., Pepler, D., & Connolly, J. (2006). Developmental trajectories of victimization: Identifying risk and protective factors. In J. E. Zins, M. J. Elias, & C. A. Maher (Eds.), Bullying, victimization, and peer harassment. (pp. 143–160). New York: Haworth Press.
[28] Hodges, E. V. E., Boivin, M., Vitaro, F., & Bukowski, W. M. (1999). The power of friendship: Protection against an escalating cycle of peer victimization. Developmental Psychology, 35(1), 94–101.
[29] Schwartz, D., Dodge, K. A., & Coie, J. D. (1993). The emergence of chronic peer victimization in boys' play groups. Child Development, 64(6), 1755–1772.
[30] Craig, W. M., & Pepler, D. J. (2007). Understanding bullying: From research to practice. Canadian Psychology, 48(2), 86–93.
[31] Salmivalli, C. (1999). Participant role approach to school bullying: Implications for intervention. Journal of Adolescence, 22(4), 453–459.

Հուզական կարգավորում	✓	✓	
Սոցիալական խնդիրների լուծում	✓	✓	✓
Ընկերական փոխհարաբերությունների կառուցում	✓	✓	✓
Ինքնավստահություն	✓		✓

ՄԱՍ 3. ԱՄՓՈՓՈՒՄ

Ստորև ներկայացված է դպրոցներում բուլինգի կանխարգելման և արձագանքման ընթացակարգերի հիմնական կետերի ամփոփագիրը.

- Դպրոցի ղեկավարությունից պահանջվում է պաշտոնապես ընդունել և իրականացնել հակաբուլինգային քաղաքականություն, որը լիովին համապատասխանում է այս ընթացակարգերի պահանջներին: Հակաբուլինգային քաղաքականության ձևանմուշը կարող է այդ նպատակով օգտագործվել բոլոր դպրոցներում:
- Դպրոցի հակաբուլինգային քաղաքականությունը պետք է հասանելի լինի դպրոցի անձնակազմին, հրապարակվի դպրոցի կայքում (կարող են մշակվել ծնողներին և սովորողներին հասանելիություն ապահովող այլ միջոցներ՝ ըստ ցանկության) և տրամադրվի ծնողական խորհուրդներին: Դպրոցի ղեկավարությունը պետք է նպաստի հակաբուլինգային քաղաքականության արդյունավետության շարունակական գնահատմանը, որի արդյունքում դպրոցի հակաբուլինգային քաղաքականությունը կարող է վերանայվել:
- Այս ընթացակարգերը ընդունում են, որ բուլինգի կանխարգելման հիմնաքարը դպրոցական դրական մշակույթն ու մթնոլորտն է, որը ողջունում է տարբերությունն ու բազմազանությունը և հիմնված է ներառականության և հարգանքի վրա: Այս ընթացակարգերը ուրվագծում են դրական դպրոցական մշակույթի և մթնոլորտի հիմնական տարրերը, ինչպես նաև դպրոցներին փոխանցում որոշ գործնական խորհուրդներ դրական դպրոցական մշակույթի և դրական մթնոլորտի ձևավորման համար:
- Այս ընթացակարգերը ընդգծում են դպրոցի մակարդակով համընդհանուր (վարչական անձնակազմ, մանկավարժական անձնակազմ, սովորողներ և ծնողներ) մոտեցման կարևորությունը: Ի լրումն ղեկավարության և անձնակազմի դերի, ծնողներն ու սովորողները ունեն նաև պատասխանատվություն՝ օգնելու դպրոցին՝ կանխելու և հաղթահարելու դպրոցական բուլինգի դրսևորումները, ինչպես նաև հաղթահարելու ցանկացած բացասական ազդեցություն դպրոցում կամ այլուր:
- Այս ընթացակարգերը պահանջում են, որ բուլինգի կանխարգելումը լինի դպրոցի հակաբուլինգային քաղաքականության անբաժանելի մասը: Կանխարգելման և արձագանքման ռազմավարությունները, որոնք կիրականացնի դպրոցը, պետք է փաստաթղթավորվեն հակաբուլինգային քաղաքականության մեջ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Դպրոցներում բուլինգի կանխարգելման գործնական օրինակներ.

Ստորև առաջարկվող գործնական օրինակները կարող են կիրառվել որպես բուլինգի կանխարգելման արդյունավետ գործիքներ.

- Դասարանական կանոնների սահմանում, կամ ինչ է ակնկալվում յուրաքանչյուր աշակերտից դասընկերների հետ փոխհարաբերությունների ընթացքում.
  - հարգել դասընկերոջ անձնական տարածքը,
  - չվնասել դասընկերոջ իրերը,
  - հարգել միմյանց իրավունքները,
  - անհրաժեշտության դեպքում ցուցաբերել համապատասխան աջակցություն,
  - չվերցնել դասընկերոջ իրերն՝ առանց հարցնելու[32].
- Դպրոցի և դասարանի կանոնների և կանոնները խախտելու դեպքում համապատասխան հետևանքների սահմանում երեխաների հետ:
- Սովորողների մասնակցությամբ քննարկումների կազմակերպում ալկոհոլի և թմրանյութերի բացասական ազդեցության մասին, առողջ ապրելակերպի կարևորության ներկայացում, ոստիկանության անչափահասների գծով տեսուչի հետ համատեղ քննարկումների կազմակերպում:
- Սովորողների ակտիվ ներգրավում.
  - Բարձր դասարաններում սովորող աշակերտների ներգրավում: Մանկավարժական անձնակազմի կողմից ընտրվում են բարձր դասարաններում սովորող, սոցիալ-հուզական և ինտելեկտուալ զարգացվածության բարձր մակարդակ ունեցող սովորողներ, ովքեր բաժանվում են 3 հոգուց բաղկացած խմբերի, և յուրաքանչյուր խումբ շաբաթվա ընթացքում մեկ օր կարգապահական հերթապահություն է իրականացնում ցածր դասարաններում սովորող աշակերտների շրջանում, խրախուսում հակաբուլինգային միջավայրի ստեղծումը, ճշտում՝ արդյոք բոլոր աշակերտներն իրենց ներգրավված են զգում միջավայրում, արդյոք անհանգստացնող խնդիրներ կան, թե ոչ: Ներգրավված աշակերտները պարբերաբար քննարկումներ են ունենում ուսուցիչների հետ, տեղեկացնում առկա խնդիրների, դրանց հաղթահարման հնարավոր ուղիների մասին,
  - Նախագծային աշխատանքներ թեմայի վերաբերյալ - երգերի, տեսանյութերի ստեղծում, թատերական ներկայացումներ,
  - Տեսանյութերի դիտում, քննարկում,
  - Բուկլետների, պաստառների պատրաստում,
  - Հակաբուլինգային խաղերի կիրառում:

[32] Петрикэ, С., Терзи-Барбарошие, Д. Антибуллинг – предотвращение и вмешательство. Программа для специалистов - М.: Print Caro, 2021

Հավելված 2. Դրական դպրոցական մշակույթի և մթնոլորտի ձևավորմանն ուղղված գործնական խորհուրդներ

- Դպրոցական համայնքի բոլոր անդամների նկատմամբ դրսևորեք հարգալից վարքագիծ:
- Հետևողականորեն վերաբերվեք դպրոցում խտրական և նվաստացնող խոսքի կիրառմանը. սա ներառում է նաև ռասիստական և հաշմանդամություն ունեցող կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին նսեմացնող խոսքի կիրառումը:
- Սովորողներին կառուցողական արձագանք տվեք, եթե հարգալից վարքագիծը և խոսքը բացակայում են: Մշակեք ցանկալի և դպրոցի կանոններին համապատասխանող վարքագիծը խթանելու, խրախուսման և պարգևատրումների համակարգ:
- Հստակորեն սովորեցրեք աշակերտներին սոցիալական մեդիայի պատշաճ օգտագործման մասին: Խրախուսեք սովորողներին պահպանել բջջային հեռախոսի և ինտերնետի օգտագործման դպրոցի կանոնները: Հետևեք և մշտադիտարկեք այն սովորողներին, ովքեր անտեսում են կանոնները:
- Ակտիվորեն ներգրավեք ծնողական համայնքը սոցիալական մեդիայի շուրջ իրազեկման բարձրացման արշավներում:
- Ակտիվորեն նպաստեք դպրոցական համայնքի յուրաքանչյուր անդամի՝ դպրոցում անվտանգ և ապահով լինելու իրավունքի իրացմանը:
- Խոսեք սովորողների հետ բուլինգի, դրա հիմնական տեսակների և բուլինգից անվտանգ պաշտպանվելու եղանակների մասին: Ասեք սովորողներին, որ բուլինգը անընդունելի է: Բացատրեք նրանց, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ բուլինգը մարդկանց վրա, և որոնք են դրա հետևանքները: Վստահ եղեք, որ նրանք գիտեն, թե ինչպես և ումից կարող են աջակցություն ստանալ:
- Օգնեք սովորողներին բացահայտելու դպրոցական բուլինգի «թեժ կետերը»: Դրանք սովորաբար լինում են.
    - բացօթյա տարածքներում՝ խաղահրապարակում, դպրոցի բակում,
    - սենյակներում, միջանցքներում և վերահսկողությունից դուրս այլ տարածքներում:
- Աջակցեք աշակերտական խորհուրդների ստեղծմանը և աշխատանքին:
- Կազմակերպեք քննարկումներ սովորողների հետ իրենց ապագա պլանների և նպատակների վերաբերյալ, փորձեք օգնել սովորողներին պլանավորելու իրենց նպատակին հասնելու ճանապարհը:

Հավելված 3. Բուլինգի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի ստուգման հարցարան

1. Սովորողի անունը և դասարանը.

Անուն, ազգանուն _____Դասարան_____

2. Ինչ է բուլինգը:

3. Բուլինգի ինչ տեսակներ գիտեք:

4. Եղել է երբևէ, որ Ձեր դպրոցում ականատես լինեք բուլինգի դրսևորման որևէ ձևի:

5. Կոնկրետ ո՞ր տեսակին եք հանդիպել:

6. Երբևէ մասնակից դարձել եք բուլինգի որևէ դրսևորման:

7. Եթե այո, ու՞մ դերում եք հանդես եկել:

8. Ըստ Ձեզ՝ ովքե՞ր են առավել հաճախ ենթարկվում բուլինգի:

9. Ըստ Ձեզ՝ ինչ է անհրաժեշտ անել դպրոցում բուլինգի երևույթները կանխարգելելու համար:

Հավելված 4. Բուլինգի միջադեպը գրանցելու ձևանմուշ

1. **Բուլինգի ենթարկվող սովորողի անունը և դասարանի խումբը.**

Անուն _____Դասարան_____

2. **Բուլինգ վարքագծի մեջ ներգրավված սովորողի(ների) անունը(ները) և դասարանը(ները).**

3. Բուլինգի մասին հաղորդման **աղբյուրը** (նշել համապատասխան վանդակը(ները)).*

Սովորողի մտահոգություն	
Այլ սովորողներ	
Ծնողներ	
Ուսուցիչ	
Աջակցող մասնագետ	
Այլ	

4. **Միջադեպերի վայրը** (նշել համապատասխան վանդակը(ները)).*

Խաղահրապարակ	
Դասարան	
Միջանցք	
Զուգարան	
Դպրոցական ավտոբուս	
Այլ	

5. **Այն անձի (անձանց) անունը, ով** բուլինգի վերաբերյալ մտահոգություն է հայտնել.

6. **Բուլինգի տեսակը, դրսևորումները** (նշել համապատասխան վանդակը(ները)).*

Ֆիզիկական ագրեսիա		Կիբերբուլինգ	
Մեկուսացում/Բացառում		Տնտեսական բուլինգ	
Վնասակար բամբասանք		Սպառնում	
Վիրավորական անուններ տալը		Իրերին հասցված վնաս	

7. **Բուլինգի վարքագծի և դրա հետևանքների համառոտ նկարագրությունը.**

8. **Իրականացված գործողությունների մանրամասները.**

Ստորագրված է _____ (համապատասխան ուսուցիչ) Ամսաթիվ _____

Տնօրենին/տնօրենի տեղակալին ներկայացնելու ամսաթիվը _____

* Ծանոթագրություն. 3, 4 և 6 աղյուսակներում թվարկված կատեգորիաները առաջարկվում են պայմանականորեն, և դպրոցները կարող են ավելացնել կամ փոփոխել դրանք՝ համապատասխանեցնելով իրենց սեփական հանգամանքներին:

Հավելված 5. Դպրոցում անվտանգ և վտանգավոր միջավայրերի բացահայտման թերթիկ

1. Թերթիկը լրացնողի տվյալներ՝

Անուն, ազգանուն_____Պաշտոն/Դասարան_____

2. Ըստ Ձեզ՝ ո՞րն է ամենաանվտանգ վայրը դպրոցում (խնդրում ենք մեկնաբանել ընտրությունը).

Վայրը	Նշում	Համառոտ մեկնաբանություն
Խաղահրապարակ		
Դասարան		
Միջանցք		
Զուգարան		
Դպրոցական ավտոբուս		
Ճաշարան		
Դահլիճ		
Այլ		

2. Ըստ Ձեզ՝ ո՞րն է ամենավտանգավոր վայրը դպրոցում, որտեղ հաճախ են տեղի ունենում բուլինգի դրսևորումներ, վեճեր, ծեծկռտուքներ (խնդրում ենք մեկնաբանել ընտրությունը).

Վայրը	Նշում	Համառոտ մեկնաբանություն
Խաղահրապարակ		
Դասարան		
Միջանցք		
Զուգարան		
Դպրոցական ավտոբուս		
Ճաշարան		
Դահլիճ		
Այլ		

Հավելված 6. Բուլինգի դեպքերին արձագանքելու ալգորիթմ

Հավելված 7. Բուլինգի վարքագծի գնահատման չափանիշներ (կարիքներ և ռիսկեր)

ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	☐ Թեթև	☐ Միջին	☐ Չափավոր	☐ Ծանր
	• Ֆիզիկական սպառնալիքի կամ վնասի բացակայություն • Աննշան ծաղրանքներ և պիտակավորումներ	• Աննշան ֆիզիկական սպառնալիքներ կամ ագրեսիա • Չափավոր ծաղր ու պիտակավորումներ	• Աննշան ֆիզիկական ագրեսիա և վնասվածքներ • Համատարած և կրկնվող ծաղրանք, նվաստացում, ծաղրող պնդումներ • Սեռական բնույթի վիրավորանքներ կամ սպառնալիքներ • Իրերի գողություն կամ վնասում	• Բժշկական միջամտություն պահանջող ծանր ֆիզիկական վնասվածքներ կամ հոգեբանական վնաս • Անպատշաճ սեռական վարքագիծ • Հայտարարություններ, որոնք կարող են դրդել ինքնավնասման
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ	☐ Թեթև	☐ Միջին	☐ Չափավոր	☐ Ծանր
	• Խորհուրդներ և ցուցումներ	• Հաղթահարելու համար պահանջվում է նվազագույն աջակցություն	• Հաղթահարելու համար անհրաժեշտ է մասնագիտական կայուն աջակցություն	• Պահանջվում է հոգեկան առողջության մասնագետների և/կամ ոստիկանության միջամտություն
ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	☐ Թեթև	☐ Միջին	☐ Չափավոր	☐ Ծանր
	• Տեղի է ունեցել առաջին անգամ • Հազիվ թե կրկնվի	• Տեղի է ունեցել երկրորդ անգամ • Հավանաբար կրկնվելու է	• Տեղի է ունեցել երեք անգամ • Հավանաբար կրկնվելու է	• Տեղի է ունեցել չորս և ավելի անգամներ • Սպառել է հայտնաբերված բոլոր դրական կարգապահական միջոցները՝ առանց որևէ բարելավման

**Չափանիշ՝ Թեթև = 1, Միջին = 2, Չափավոր = 3, Ծանր = 4*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ք. Միխաիլիդի, Ա. Մանուկյան, «Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում» ուսումնական հաստատությունների անձնակազմի համար ուղեցույց, 2024
2. Երեխաների իրավունքների մասին ՀՀ օրենք, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165162 ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66138
3. Cook, C. R., Williams, K. R., Guerra, N. G., Kim, T. E., & Sadek, S. (2010). Predictors of bullying and victimization in childhood and adolescence: A meta-analytic investigation. School Psychology Quarterly, 25, 65–83.
4. Cook, C. R., Williams, K. R., Guerra, N. G., Kim, T. E., & Sadek, S. (2010). Predictors of bullying and victimization in childhood and adolescence: A meta-analytic investigation. School Psychology Quarterly, 25, 65–83.
5. Craig, W. M., & Pepler, D. J. (2007). Understanding bullying: From research to practice. Canadian Psychology, 48(2), 86–93.
6. Durlak, J. A., Weissberg, R. P., Dymnicki, A. B., Taylor, R. D., & Schellinger, K. B. (2011). The impact of enhancing students' social and emotional learning: A meta-analysis of schoolbased universal interventions. Child Development, 82(1), 405–432.
7. Farrington, D. P., & Ttofi, M. M. (2009). How to reduce school bullying. Victims and Offenders, 4, 321–326.
8. Goldbaum, S., Craig, W. M., Pepler, D., & Connolly, J. (2006). Developmental trajectories of victimization: Identifying risk and protective factors. In J. E. Zins, M. J. Elias, & C. A. Maher (Eds.), Bullying, victimization, and peer harassment. (pp. 143–160). New York: Haworth Press.
9. Goldbaum, S., Craig, W. M., Pepler, D., & Connolly, J. (2006). Developmental trajectories of victimization: Identifying risk and protective factors. In J. E. Zins, M. J. Elias, & C. A. Maher (Eds.), Bullying, victimization, and peer harassment. (pp. 143–160). New York: Haworth Press.
10. Hodges, E. V. E., & Perry, D. G. (1999). Personal and interpersonal antecedents and consequences of victimization by peers. Journal of Personality and Social Psychology, 76(4), 677–685.
11. Hodges, E. V. E., & Perry, D. G. (1999). Personal and interpersonal antecedents and consequences of victimization by peers. Journal of Personality and Social Psychology, 76(4), 677–685.
12. Hodges, E. V. E., Boivin, M., Vitaro, F., & Bukowski, W. M. (1999). The power of friendship: Protection against an escalating cycle of peer victimization. Developmental Psychology, 35(1), 94–101
13. Litvack-Miller, W., MacDougall, D., & Romney, D. M. (1997). The structure of empathy during middle childhood and its relationship to prosocial behaviour. Genetic, Social and General Psychology Monographs, 123, 303–324.

14. National Crime Prevention Council. (2012). Bullying. Retrieved from http://www.ncpc.org/topics/bullying
15. Nickerson, A. B., Mele, D., & Princiotta, D. (2008). Attachment and empathy as predictors of roles as defenders or outsiders in bullying interactions. Journal of School Psychology, 46(6), 687–703
16. Nur, Asyah., Rizqy, Fadhlina, Putri., Rini, Fadhillah, Putri. (2023). Pelaksanaan Teknik Bimbingan dan Konseling Bagi Guru Untuk Mengatasi Perilaku Bullying di Sekolah. doi: 10.59342/jpkm.v2i2.152
17. Olweus, D. (1993). Bullying at school. Malden, MA: Wiley-Blackwell
18. Perren, S., & Alsaker, F. D. (2006). Social behavior and peer relationships of victims, bullyvictims, and bullies in kindergarten. Journal of Child Psychology and Psychiatry, 47(1), 45–57.
19. Ragozzino, K., & Utne O'Brien, M. (2009). Social and emotional learning and bullying prevention. Retrieved from http://casel.org/downloads/2009_bullyingbrief.pdf
20. Rigby, K., & Johnson, B. (2007). Playground heroes: Who can stop bullying? Greater Good Magazine, 3(2), 14–17.
21. Rodkin, P. C., & Hodges, E. V. E. (2003). Bullies and victims in the peer ecology: Four questions for psychologists and school professionals. School Psychology Review, 32(3), 384–400.
22. Rose, C. A., L. E. Monda-Amaya, and D. L. Espelage. 2011. "Bullying Perpetration and Victimization in Special Education: A Review of the Literature." Remedial and Special Education 32 (2): 114–130.
23. Russell, S. T., K. O. Sinclair, V. P. Poteat, and B. W. Koenig. 2012. "Adolescent Health and Harassment Based on Discriminatory Bias." American Journal of Public Health 102: 493–495.
24. Saldiraner, M., and Gizir, S. (2021). Bullying from the perspectives of middle school principals. Int. J. Progr. Educ. 17, 294–313. doi: 10.29329/ijpe.2020.329.19
25. Salmivalli, C. (1999). Participant role approach to school bullying: Implications for intervention. Journal of Adolescence, 22(4), 453–459.
26. Schwartz, D., Dodge, K. A., & Coie, J. D. (1993). The emergence of chronic peer victimization in boys' play groups. Child Development, 64(6), 1755–1772.
27. Swearer, S. M., Espelage, D. L., & Napolitano, S. A. (2009). Bullying prevention and intervention: realistic strategies for schools. Guilford Press.
28. UNESCO. 2017. School Violence and Bullying. Global Status Report. Paris: UNESCO.
29. Warden, D., & MacKinnon, S. (2003). Prosocial children, bullies and victims: An investigation of their sociometric status, empathy and social-problem solving strategies. British Journal of Developmental Psychology, 21(3), 367–385.
30. Петрикэ, С., Терзи-Барбарошие, Д. Антибуллинг – предотвращение и вмешательство. Программа для специалистов - М.: Print Caro, 2021
31. Янова Н.Г. От буллинга к антибуллингу: школьные программы профилактики агрессии. – Барнаул: Принт-Экспресс, 2021 – 180с. ISBN 978-5-6047152-0-8

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԲՈՒԼԻՆԳԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն
Լիբերալ քաղաքականության ինստիտուտ
2024, մայիս